ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 04-Լ 11.02.2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 35-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, ինպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետերով սահմանված դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվների հաստատման կարգը հաստատելու մասին» թիվ 35-Լ հրամանում (այսուհետև՝ հրաման) կատարել հետևյալ

1. Հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվների հաստատման կարգի 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Նախահաշիվը և դրանցում կատարվող փոփոխությունները նախարարություն մուտք լինելուց հետո, մակագրվում են տվյալ միջոցառման համար պատասխանատու սահմանված ստորաբաժանմանը (ի գիտություն) և ֆինանսաբյուջետային վարչությանը (ի տնօրինություն): Պատասխանատու ստորաբաժանումը նախահաշիվը ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան հիմնավորումներով նախարարության

ֆինանսաբյուջետային վարչությանն է տրամադրում առարկությունները նախահաշվի կամ դրանցում կատարվող փոփոխության վերաբերյալ:

4. Ֆինանսաբյուջետային վարչությունը սույն կարգի 3-րդ կետում նշված առարկությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նախահաշիվը և դրանցում կատարվող փոփոխությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացում իրականացնում է ուսումնասիրություններ, և, պատասխանատու ստորաբաժանման առարկությունները հիմնավոր համարելու կամ նախահաշիվները կամ դրանցում կատարվող փոփոխությունները սույն կարգի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեության տվյալները ոչ հավաստի համարելու դեպքում մերժում է ներկայացված նախահաշիվները կամ դրանցում կատարվող փոփոխությունները, հակառակ դեպքում դրանք ներկայացնում է նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը՝ ապահովելով կատարողի, ֆինասաբյուջետային վարչության համապատասխան բաժնի պետի, ֆինասաբյուջետային վարչության պետի և նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալի ստորագրությունները՝ նախահաշվի թղթային տարբերակի դարձերեսին:»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վահրամ Գասպարյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X